



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ



Արցախի Հանրապետության «Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ԱրՊՀ), ի դեմս ռեկտոր Արմեն Սարգսյանի, ով գործում է ԱրՊՀ Կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ԳՊՀ), ի դեմս ռեկտոր Արտուշ Ղուկասյանի, ով գործում է ԳՊՀ-ի Կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով միջբուհական համագործակցության ապահովման, կողմերի գիտատեխնիկական և կադրային կարողությունների լիարժեք օգտագործման և առաջավոր փորձի փոխանակման անհրաժեշտությունը, Սյունիք-Արցախ տարածաշրջանային գիտակրթական կապերի ամրապնդման և հարավային ակադեմիական միջավայրի ձևավորման կարևորությունն ու ռազմավարական նշանակությունը, կնքեցին համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. Հուշագրի առարկան

1.1. Հուշագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների, Կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանումն է:

2. Հուշագրի նպատակը և համագործակցության հիմնական ուղղությունները

2.1. Հուշագրի նպատակը Կողմերի միջև կրթական և գիտահետազոտական ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատումն է, համագործակցության ծրագրերի իրականացումը՝ Հուշագրի 2.2. կետում նախատեսված ուղղություններով:

2.2. Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.

ա/ ԱրՊՀ-ում և ԳՊՀ-ում իրականացվող կրթական ծրագրերի մասին տեղեկությունների տրամադրում, համատեղ կամ կրկնակի որակավորմամբ կրթական ծրագրերի իրականացմանն ուղղված պաշխատանքների քննարկում և կազմակերպում,

- բ/ ԱրՊՀ-ում և ԳՊՀ-ում մշակված առարկայական ծրագրերի, կրթական ծրագրերի արտաքին փորձագիտական գնահատման աշխատանքների իրականացում,
- գ/ սովորողների և պրոֆեսորադասախոսական կազմի անդամների ակադեմիական շարժունության իրականացում՝ նախապես հաստատելով փոխանակման պայմանները, ֆինանսավորումը,
- դ/ կրթական ծրագրերի և/կամ առանձին դասընթացների համատեղ մշակում՝ սովորողների համար հնարավորություններ ստեղծելով կրթություն ստանալու նաև հեռաուսուցման միջոցով,
- ե/ սովորողների և դասախոսների մասնագիտական վերապատրաստումների, վարպետության դասերի, կյոք սեղանների, թեմատիկ բանավեճերի կազմակերպում,
- զ/ համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացում,
- է/ ԱրՊՀ-ի և ԳՊՀ-ի գիտական ամսագրերում համատեղ ուսումնագիտական հետազոտությունների արդյունքների հրատարակում.
- ը/ Կողմերի ուսանողների գիտահետազոտական, գիտամանկավարժական, ուսումնական արտադրական պրակտիկաների փոխադարձ կազմակերպում,
- թ/ սովորողների ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի փոխադարձ զեկավարում և գրախոսում, գիտակրթական և մեթոդական գրականության ու մասնագիտական զարգացմանը նպաստող էլեկտրոնային աղբյուրների տրամադրում, գիտական աշխատությունների, դասագրքերի, ուսումնական նյութերի, ուսումնամեթոդական ձեռնարկների մշակում և խմբագրում,
- ժ/ համատեղ հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում,
- ժա/ համատեղ կրթական, գիտական ուղղվածության դրամաշնորհային ծրագրերի իրականացում,
- ժբ/ մյուս Կողմին արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում որպես գործընկեր ներգրավում,
- ժգ/ Կողմերի իրականացրած այլ կրթական, գիտական, մշակութային ծրագրերին, կազմակերպած միջոցառումներին մասնակցություն:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

- 3.1. Կողմերն իրավունք ունեն հանդես գալու Հուշագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու անցկացման նախաձեռնողի դերում:
- 3.2. Համագործակցության նպատակով, Հուշագրի հիման վրա, Կողմերը պարտավորվում են.
- ա/ ժամանակին միմյանց փոխանցել համապատասխան տեղեկատվություն, որը վերաբերում է Հուշագրով նախատեսված համատեղ ծրագրերի ու միջոցառումների անցկացմանը,
- բ/ անվճար հիմունքներով խորհրդատվություն տրամադրել ծրագրի ու միջոցառումների կազմակերպման ու անցկացման հարցերում,

զ/ ապահովել անհրաժեշտ նյութական բազա և պայմաններ՝ համատեղ ծրագրեր իրականացնելու և միջոցառումներ անցկացնելու համար,
դ/նախօրոք տեղյակ պահել միմյանց համագործակցության ընթացքում առաջացող խնդիրների միասին և համատեղ ուժերով ապահովել դրանց լուծումը:

4. Հուշագիրն ուժի մեջ մտնելու և գործողության ժամկետները

- 4.1. Հուշագիրը բաղկացած է 3 էջից և ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:
- 4.2. Հուշագիրը կնքվում է 5 տարի ժամկետով: Ժամկետը լրանալուց հետո, եթե որևէ Կողմից այլ առարկություն չի լինում, ապա Հուշագրի գործունեության ժամկետն ինքնրստինքյան շարունակվում է ևս 5 տարի:
- 4.3. Հուշագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:
- 4.4. Կողմերից մեկի նախաձեռնությամբ Հուշագրի դադարեցման անհրաժեշտության դեպքում մյուս Կողմը պետք է տեղեկանա այդ մասին գրավոր՝ ենթադրյալ լուծման պահից առնվազն 10 օր առաջ:

5. Եզրափակիչ դրույթներ

- 5.1. Հուշագիրը Կողմերի համար որևէ ֆինանսական պարտավորություն չի առաջացնում:

6. Կողմերի իրավաբանական հասցեները

«Արցախի պետական համալսարան»

ՊՈԱԿ

Հասցե՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Մ.Գոշի 5

Էլ. Հասցե՝ rector@asu.am

Հեռ.՝ +37447 94-04-91

«Գորիսի պետական համալսարան»

ՊՈԱԿ

Հասցե՝ ՀՀ, ք. Գորիս, Ավանգարդ 4

Էլ. Փոստ՝ gorissu@mail.ru

Հեռ.՝ +374 0284 2 27 67

Ռեկտոր

Ա. Սարգսյան

Կ.Տ.

« 2020թ.



Ռեկտոր

Ա. Ղուկասյան

Կ.Տ.

« 2020թ.

